Doi: 10.56737/2953-7843-2023.06-19

Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ
Երուսաղէմ

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1829 Թ. ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ[1]

Հայկական Թաղամասը Երուսաղէմի հին քաղաքում պատմականօրէն ձեւաւորուած չորս թաղամասերից մէկն է։ Այս կարեւոր եւ իրաւական ներկայութիւնը դարաւոր պայքարի, անխոնջ ու հաւատարիմ նուիրումի արդիւնք է, որ ցայսօր պահպանում է հայոց ազգը յանձին Սրբոց Յակոբեանց միաբանութեան։

Ազգն ու Եկեղեցին սիրող իւրաքանչիւր հայ, հոգեւորական թէ աշխարհական՝ ուր էլ լինի, վստահ եմ, հոգեւոր նախանձախնդրութեամբ լցուած՝ ցանկանում է Երուսաղէմում ապահով տեսնել հայոց ներկայութիւնը՝ յատկապէս Սրբատեղիներում իրաւունքների պահպանութեամբ։

Սուրբ Յարութեան Տաճարը յատկապէս կարեւորւում է նրանով, որ համաքրիստոնէական եւ երբեմն միջազգային քաղաքականութեան կարեւորութիւն ունի։

Երուսաղէմում ԺԹ. դարասկզբին օսմանցիների կառավարութեան ժամանակը կարելի է բնութագրել որպէս կաշառակերութեան եւ իրաւունքների խաղարկման շրջան։ Հետեւաբար այդ պայմաններում Հայոց Պատրիարքութեան գոյատեւման համար մեծ խնդիր էին դառնում գումար հայթայթելը եւ իրաւունքների մրցապայքարից յաղթականօրէն կամ գոնէ նուազագոյն կորուստներով դուրս գալը։ Դժուարագոյն առաքելութիւն էր Սբ. Յակոբեանց հայոց միաբանութեան համար անվերջանալի

---

[1]* *Ստացուել է՝ 20.03.2023, գրախօսուել է՝ 28.03.2023։*

էլ. հասցէ՝ terararatqahana@gmail.com։

հալածանքներին դիմագրաւելը։ Բայց, այդուհանդերձ, շնորհիւ բազմաթիւ նուիրեալների, ինչպիսիք են Պօղոս պատրիարք Ադրիանապոլսեցին, Թէոդորոս պատրիարք Վանցին, Զաքարիա վարդապետ (ապա՝ պատրիարք Երուսաղէմի) Կոբեցին, Գաբրիէլ պատրիարք Նիկոմիդացին, Թարգման մահտեսի Աւետիս Վանցին, Կարապետ ամիրա Ազնաւորեանը, Գրիգոր Զերեզեանը, Յարութիւն ամիրա Պէզճեանը, Յովհաննէս Զելէպին եւ այլոք, Երուսաղէմի սրբատեղիներից ներս եւ դուրս՝ հայոց վարչաիրաւական, կրօնական եւ մշակութային ներկայութիւնը շարունակուեց։

Ասենք, որ Սբ. Երկրում հայերի ներկայութիւնը կապուած է եղել առաջին հերթին քրիստոնէութեան գլխաւոր սրբավայրերում մեր ունեցած իրաւունքների պահպանութեան հետ։ Դրա վառ արտայայտութիւններից մէկը 1808 թուականի սեպտեմբերին Սբ. Յարութեան Տաճարում բռնկուած «հրդեհն» է։ Այն մեծ աղմուկ բարձրացրեց եւ տարաձայնութիւն առաջացրեց Սրբատեղիները տնօրինելու իրաւունք ունեցող կրօնական իշխանութիւնների միջեւ։ Յոյները դաւադրաբար մեղադրեցին հայերին՝ իրենց մեղքը թաքցնելու նպատակով։ Կաթոլիկներն սկզբում միացան յոյներին, ապա զգալով, որ միեւնոյն ճակատագրին կարող են արժանանալ նաեւ իրենք, թեքուեցին հայերի կողմը։ Բազմաթիւ դատ ու դատաստաններից յետոյ յոյներին յաջողուեց Մահմուդ Բ. սուլթանից ստանալ Սրբատեղիներում միայնակ նորոգութիւն կատարելու ֆերմանը, սակայն այնտեղ յստակ նշուած էր, որ «երկոսին ազգսն հաւասար ճանաչեմ... յոյնք միայն շինելոյ ունին հրաման եւ ոչ բոլորին տիրելոյ»[2], 1810 թ. յոյներն այս հրովարտակի ուժով նորոգում են Սբ. Գերեզմանը՝ նաեւ իրաւունք ստանալով պատարագել Սբ. Գերեզմանի վրայ եւ անշուշտ յոյս ունենալով, որ կկարողանան հայերին վերջնականապէս դուրս վտարել Սրբատեղիներից։ Խնդիրն այն էր, որ երբեմն Պոլսից եկող հրովարտակները չէին իրագործւում ըստ պատշաճի։ Այսինքն՝ իրաւունքն անցնում էր աւելի շատ կաշառք տուողի կողմը։ Վաճառւում էր ցանկացած իրաւունք, եւ գումարն էլ կամայական էր։ Իւրաքանչիւր բարձրաստիճան պաշտօնեայ, գիտակցելով իր պաշտօնավարութեան կարճ տեւողութիւնը, հնարաւորինս կեղեքում էր քրիստոնեաներին եւ

---

[2] Աստուածատուր եպս. Յովհաննիսեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, հտ. Բ., Երուսաղէմ, 1890, վերատպեալ 1999, էջ 214։*

իրաւունքներ ծախում, «կարի դժուարին էր ի նեղ ժամանակին յայնմիկ լցուցանել զանզուսպ ագահութիւնս նոցա»[3]։ Սակայն հայ հոգեւորականներն ու պատասխանատու անձինք «տանջանք եւ նեղութիւնք որ վասն Ս. Տեղեաց եւ Ս. Աթոռոյն էր՝ փառս համարէին ինքեանց»[4]։

Երուսաղէմի Ս. Աթոռի փոխանորդութեան պաշտօնն այդ դժուարին ժամանակներում վարում էր Զաքարիա վրդ. Կոբեցին (յետագայում՝ Երուսաղէմի պատրիարք)։ Վերջինս ազգասէր եւ Ս. Աթոռի շահերին եւ իրաւունքներին նախանձախնդիր հոգի ունէր եւ գիշեր ու ցերեկ տքնում էր՝ կրկին ձեռք բերելու նրա կորցրած իրաւունքները։ Պօղոս պատրիարքն իր հերթին ջանում էր Ս. Աթոռն ազատել պարտքերից։ Քաջալերուելով սուլթան Մահմուդի բարեացակամութիւնից եւ խորհրդակցելով Միքայէլ Փիշմիշեան ամիրայի հետ՝ Զաքարիա վարդապետն աղերսագրով դիմում է սուլթանին, որ հայերին էլ վերստին իրաւունք շնորհի պատարագելու Քրիստոսի Սուրբ Գերեզմանի վրայ։

Զաքարիա վարդապետը, քաջալերուելով ձեռք բերուած վերոյիշեալ իրաւունքով, համարձակւում է Փիշմիշեան ամիրայի միջնորդութեամբ երկրորդ անգամ դիմել արքային՝ Գողգոթան[5] (Քրիստոսի խաչելութեան սրբատեղին) հայերին յետ վերադարձնելու խնդրանքով։ Զաքարիա վարդապետը նախօրօք տեղեակ չէր պահել Պատրիարքարանին եւ միւս ամիրաներին՝ վախենալով, որ գործը կը խափանուի։ Փոխարքայ Խուսրէվ փաշան, իր մօտ կանչելով Պէզճեան ամիրային, բարկանում եւ ասում է, թէ հայերը խնդիրներ են առաջացնում, եւ մի խնդրանքը դեռ նոր կատարուած, երկրորդ խնդրանքն է յաջորդում։ Խնդիրն այն էր, որ ռուս-թուրքական պատերազմը նոր էր աւարտուել, իսկ կայսրութիւնը ծանր գին էր վճարել այդ պատերազմում եւ հնարաւորինս ցանկանում էր պահպանել լաւ յարաբերութիւններ կայսերական Ռուսաստանի հետ։ Յաջորդ եւ կարեւոր հանգամանքն այն էր, որ ռուսները, բացի ուխտաւորներից, նաեւ դրամական եւ քաղաքական աջակցութիւն էին ցուցաբերում Պոլսոյ եւ Երուսաղէմի յունաց Պատրիարքարաններին, որով մեծանում էր նրանց ազդեցութեան գործօնը Սրբատեղիների հար-

---

[3] *Նշ. աշխ., էջ 442*

[4] *Նշ. աշխ., էջ 444*

[5] *Այն խարդախութեամբ յափշտակել էին վրացիները 1430-ին՝ Մարտիրոս Ա. պատրիարքի օրօք, ապա յոյները վերջիններից խլել էին։ Յայսօր այն վերահսկում են յոյները, սակայն այնտեղ ամէն շաբաթ աղօթքի իրաւունք ունի Հայ Եկեղեցին։*

ցերում։ Իսկ Գողգոթայի պէս կարեւորագոյն սրբատեղին նրանց դաւանակիցներից վերցնելը եւ հայերին տալը կը նշանակէր անարգանք հասցնել Ռուսաստանին եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցու հետեւորդներին։ Եւ երկրորդ գործօնն աւելի քաղաքական էր։ Յունաց ապստամբութիւնները նոր էին աւարտուել, որից յետոյ Յունաստանն անկախութիւն էր ձեռք բերել եւ սուր քայլերով կարող էին բորբոքել նոր ապստամբութիւն կայսրութեան սահմաններին եւ սահմաններից ներս։ Իսկ երրորդ գործօնը շահադիտական էր։ Խնդիրն այն էր, որ կայսրութեան պաշտօնեաները խիստ ցածր աշխատավարձ էին ստանում պետութիւնից, եւ նրանց աչքերը մշտապէս ուղղուած էին յատկապէս քրիստոնեաների գրպաններին։ Դժուար կացութիւն էր կայսրութիւնում. «Փակեցան ծովային ճանապարհք յերեսաց պատերազմաց եւ խռովութեանց ժամանակին[6]»։ Կաշառակերութիւնը համատարած բնոյթ էր կրում եւ կենսակերպի անբաժան մաս էր։ Ահա այդպիսի բացատրութիւններից մէկը. «Դատաւորք եւ աւագանիք քաղաքին յաւէտ ի գանձս յունաց հայէին քան յիրաւունս ազգի եւ հրամանի արքային»[7]։

Բազմաթիւ նեղութիւններից ու տառապանքներից յետոյ, փառք Աստուծոյ, 1829 թ. սեպտեմբեր 2-ին հայերը, հանդիսաւորապէս զարդարելով Սուրբ Գերեզմանը, Պատարագ են մատուցում լոյս 3-ի գիշերը։ Սբ. Պատարագը մատուցում է Ադրիանապոլսեցի Պօղոս արքեպիսկոպոսը, որն այդ ժամանակ Սուրբ Աթոռի ծայրագոյն կառավարիչն էր։ Մշտնջենաւոր յիշատակարան են գրում Միքայէլ Փիշմիշեանի եւ Յարութիւն Պէզճեանի անուններով[8]։

Այս բարի լուրն այնքան ոգեւորութեամբ է ընդունւում հայ ժողովրդի կողմից, որի զաւակները հազարներով յորդում են դէպի սուրբ քաղաք՝ մասնակցելու Սբ. Յարութեան տօնին եւ այլ մեծ տօների. «Յորդէին ի քաղաքաց քաղաքաց տէրունական ուխտաւորքն, մինչեւ լինել թիւ ուխտաւորաց ի միում տարին իբր հինգ հազարաց»[9]։

Օսմանեան իշխանութիւնների հետ դրական յարաբերութիւնների ապահովումը եւ Պաղեստինում օսմանահպատակ հայութեան ու Սբ.

---

[6] Աստուածատուր եպս. Յովհաննիսեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, հտ. Բ., Երուսաղէմ, 1890, վերատպուեալ 1999, էջ 445։*

[7] *Նշ. աշխ., էջ 450*

[8] *Նշ. աշխ., էջ 441։*

[9] *Ձեռագրատուն Սրբոց Յակոբեանց, ձեռագիր թիւ 997 (Ժողովածոյ), էջ 458։*

Յակոբեանց Առաքելական Սբ. Աթոռի կենսական շահերի պաշտպանութիւնն իրականացուում էին Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան եւ Պոլսում գործող հայ երեւելի ամիրաների եւ անհատների ջանքերով ձեռք բերուած հրովարտակներով (ֆերմաններ) ու հաստատագրերով (հոճէթներ)։ Ուստի Հայոց Պատրիարքների գործունէութեան գնահատման ճանապարհին խիստ կարեւոր է հաշուի առնել նաեւ նրանց ձեռք բերած իրաւական փաստաթղթերն ու հրովարտակները։ Այս առումով պատմագիտական մեծ արժէք են ներկայացնում Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մայր դիւանում պահպանուող հայերէն, արաբերէն եւ օսմաներէն վաւերագրերն ու պատրիարքների նամակները, որոնցից սոյն յօդուածի շրջանակներում կդիտարկուեն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մայր դիւանում պահուող՝ 1829 թ. ձեռք բերուած հրովարտակը[10] (յաւելուած Ա.) եւ նամակները (յաւելուած Բ.)՝ գնահատելու համար պատարագելու իրաւունքի հետ կապուած եւ դրանից բխող այլ առանձնայատկութիւններ։

Ա. ՊՕՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ[11]

Սէ՛ր իմ շնորհազարդ Զաքարիա Վրդ։

Փոյթ ընդ փոյթ աճապարեցաք ի սոյն գրութիւն աւետաւորել ձեզ յանպատում ուրախութիւն, զի լցաւ փափագ սրտի ձեր եւ օրհնեալ Ազգին՝ միանգամայն եւ մեր ամենեցուն, վասն որոյ ասեմք աչք ձեր ի լոյս եղիցի, քանզի բարեհաճ կամօք բարձրելոյն յաւուր երկուշաբթի, Սեպտ. երկու գնացեալ ի տաճարն սրբոյ Յարութեան ընդ աւագորեարս քաղաքին եւ զամենայն գործն լրացուցեալ ըստ խնդրանաց մերոց եւ հրամանին Արքայի՝ ի ժամ 7 ի գիշերի պատարագեցաք ի վերայ սրբոյ Գերեզմանին յիշելով զննջեցեալս օրհնեալ Ազգին, բարեմաղթելով առ Տէր յաղագս կենաց բարերջանկութեան մեծազօր թագաւորին, զոր նոյն Աստուած՝ հաստատ եւ պայծառ արասցէ զՏէրութիւն նորա՝ եւ զԱզգն օրհնելով օրհնեսցէ. մեծապէս Ամիրայից՝ անփոռձ եւ խաղաղ կեանս պարգեւեսցէ, մանաւանդ զայնոսիկ՝ որք բազում ջերմեռանդութեամբ եւ աշխատասիրութեամբ պատճառ եւ հոգեբարձու եղեն յաղագս այսպիսի մեծի գործոյ եւ պարծանաց համօրէն Ազգի, յերկոսին կեանս հո-

---

[10] *Մայր դիւան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, սուլթան Մահմուդ Բ.-ի ֆերման,* Hc/Բ/Sepal 63, *1829։*

[11] *Մայր դիւան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, Գաբրիէլ Ա. պատրիարքի նամականի, 3 սեպտեմբերի, 1829։*

գեւոր եւ մարմնաւոր ճոխութեամբ փառաց՝ շքեղազարդեսցէ տալով վարձս եւ սիրելոյդ ըստ ամենայն հարազատութեան եւ բազմաշխատութեան ձերոյ՝ զոր առնէք ի սէր սուրբ Տեղեաց Փրկչին մերոյ:

Բայց զգուշացարում այդր ի կողմանէ լատինացւոց՝ քանզի որպէս աստ որք բազում իւիք ընդդիմացան մեզ՝ նոյնպէս լսեմք՝ զի բազում բանս խօսին՝ եւ եղեալ են ի մտի զայն առնել այն է նորոգ ֆերմանիւ տէրութեան արգելուլ զմեզ եւ առ այս գործ վասն նոցին ընդդիմութեան բազում ինչ վնասեցաք ի կողմանէ դրամոց որպէս եւ զայլ հարկաւոր ծանուցանելիսն գրեմք զկնի այսր:

Զֆեթվան տեսի վասն ռեսմին յոյժ բարի է. օր յառաջ ջանա՛ զնորին ֆերմանն առնուլ: Նոյնպէս զայն ֆերմանն առնուլ ջանա՛ որոյ զիլամն ընդ թագսիտի իլամին առաքեալ եմք: Այն է 7 զմայր դրամն առաւել տուեալ շահն հետս պահանջել եթէ մուրհակն չիցէ փոխեալ, քանզի վասն տեսակ առ տեսակ դրամոց ձեր առաքեալ ֆերմանն չունի ինչ օգուտ եւ պիտանաւորութիւն ըստ որում յայն միտս դրամ խնդրողք ոչ գոյն որպէս եւ գրեալ եմք յառաջ: Ըստ գրութեանդ դուք այդր իմտատիյէ ժողովելոյ չունիք ժամանակ եւ մեք անհնարին աստ տառապիմք, մանաւանդ վասն յառաջիկայ լրացեալ գործոյն, ապա դուք եւ մեք զԱստուած աղաղակեսցուք որ գիտէ զբարին մեր առաւել քան զոր խնդրեմք մեք եւ իմանամք:

Սեպտեմբեր մէկ. Աստուածատուր Արհին ընդ ուխտաւորացն անվնաս հասեալ են ի Յոպպէ:

Ո՛ղջ լեր խաղաղ եւ ուրախ կենօք ի սէր

Պօղոս եպս.

1829, սեպտ. 3, ի սուրբ Երուսաղէմ

Բ. ՊՕՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ[12]

Սէր իմ:

Փառք Աստուծոյ: Գործն կատարեցաւ, զի ի սեպտեմբեր 3 զսուրբ Պատարագն մատուցաք ի վերայ սուրբ Գերեզմանին Քրիստոսի Տեառն մերոյ:

Լատինք եւ յոյնք բազում իւիք հակառակեցան, թէպէտ այլ ոչ ունէին բնաւ իրաւունք: Լատինք հրովարտակ մի եհան, որպէս զի նովաւ մաքառեսցի ընդ մեզ, բայց ինք գրեալ է թէ. «թիւրպէ պիր միլլէթէ վաքֆ տէկիլ ահր»[13] ոչ լա-

[12] *Մայր դիւան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, Գաբրիէլ Ա. պատրիարքի նամականի, 8 սեպտեմբերի, 1829։*

[13] *Գերեզմանը միայն մէկ ազգի վիճակ չլինի, այլ առանձին մնայ։*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. Մայիս, 1829 թ. Մահմուդ Բ. սուլթանի կողմից տրուած ֆերմանը, որով հայերը վերականգնում են Սբ. Գերեզմանի վրայ պատարագելու իրաւունքը.

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

Սեպտեմբեր 3 եւ 8, 1829 թ. (նամակ Ա. եւ Բ.) Պօղոս արք. Ադրիանուպոլսեցու նամակների բնօրինակները, որոնք տպագրւում են առաջին անգամ՝ ուղղուած Երուսաղէմի վէրիլ Զաքարիա վրդ. Կոբեցուն՝ 1829-ին Սբ. Գերեզմանի վրայ առաջին պատարագի մասին:



Հարգելի Տիրոջ Գրիգոր Աղայեանց

Ազգ. Դպրոցական Խորհրդոյ նախագահ

Թիֆլիս

տինացւոց եւ ոչ յունաց վնաս գոյ, քանզի նոյն են եւ ի նոյնութեան մնացին: Բայց միայն մեք եւս իբրեւ զձայնս ունեցաք պատկեր, կանթեղ, աշտանակ՝ թէ ի ի ներքս ի գերեզմանին եւ թէ ի դրան եւ թէ ի կաթուղիկէն, եւ աւել ածելն եւս մէկ շաբաթ լատին, մէկ շաբաթ յոյն, եւ մէկ շաբաթ մեք: Պատարագ մատուցանել նախ յոյն ի կէս գիշերին մէկ ժամուկէս միջոցաւ, յետ որոյ մեք եւ յետոյ լատին, զի ժամանակն լատինի յարշալոյսն է յատկացեալ ի բնէ: Լատինն զկնի յունաց առնէր զիւր պատարագն՝ այլ մեք յունաց զկնի առնեմք, զի լատինն զիւր ժամանակն չփոխէ: Եւ յառաջ երկու պատկեր կայր ընդ յունաց եւ լատինացւոց, այժմ եղեւ 3 բաժին՝ նախ լատինացւոց, յետոյ յունաց եւ յետոյ մեր: Որպէս եւ հէօճէթն ցուցանէ: Արդ իմացաք, որ լատինն ի Պոլիս մարդ յղեալ է եւ այժմ ռէիզն նոցա ունի դիմել այդր, ապա զգուշացէք, զի մի՛ յետինն չար լիցի քան զառաջինն, զի այս բան որ կատարեցաւ եթէ այլայլեսցի կամ յետս դարձցի. զոր Տէր մի՛ արասցէ, յոյժ վնաս եւ տնաւերութիւն լինի մեզ որպէս յայտ է ինքնոցս: Հրովարտակին եկին՝ զորմէ ի սպառ մեք անտեղեակ էաք եւ որք մարթ էր, ամենայնիւ բանն յառաջ գնաց ըստ արքունի հրամանին, այլ ոչ թէ ունայնաձեռն զի յայտնի է տեղւոյս թէութիւն որ ծանր լինի աստ այսպիսի բանք, զորմէ յետոյ գրեմք ձեզ: Նաեւ Շումայ բդեշխին ի հարկաւոր տեղեաց կամ ի ստակ բռնողէն շնորհակալութեան գիր յղէք՝ լաւ: Եւ զայս գիր շեշտիւ գրեալ յղեցաք ի լինել ձեզ արթուն ի վնասուց լատինաց եւ յունաց, զի մի՛ զամօթի հարցուք ազգովին: Ողջ լեր ի սէր

Իլամն եւ հէօճէթն վաղէն մնաց, զի իսպառ անյետացան. Ուխտաւորք վաղուեան օր գան ամենայնիւ

Պօղոս եպիսկոպոս
1829 սեպտ. 8
Յերուսաղէմ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բազմաթիւ մաքառումներից ու տանջանքներից յետոյ Զաքարիա Կոբեցու, Պօղոս Ադրիանուպոլսեցու, Միքայէլ եւ Յարութիւն ամիրաների ջանքերով Մահմուդ Բ.-ն 1829-ին հայերին շնորհեց հրովարտակ (ֆերման), որով վերականգնուեց Սբ. Յարութեան Տաճարում, Սուրբ Գերեզմանի վրայ պատարագելու իրաւունքը՝ մեծ ուրախութիւն պարգեւելով համայն հայութեանը: Կարեւորագոյն այս իրաւունքները պահպանւում են ցայսօր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմից՝ յանձին

իր Սբ. Յակոբեանց միաբանութեան՝ որպէս հայի մշտնջենաւոր առաքելութիւն, իրաւունք ու ամէնօրեայ պաշտամունք։

ՀԻՄՆԲԱՌԵՐ

Երուսաղէմ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւն, իրաւունքներ, Զաքարիա վրդ. Կոբեցի, Պօղոս արք. Ադրիանուպոլսեցի, Սրբատեղիներ, Միքայէլ Պիշմիշեան ամիրա, Յարութիւն Պէզճեան ամիրա, պատրիարք, Մահմուդ Բ., Սուրբ Յարութեան Տաճար, Սուլթան Մահմուդ Բ., յոյներ։

РЕЗЮМЕ

После многих трудностей и страданий, благодаря усилиям архимандрита Закарии Кобеци, арх. Погос Адрианополсеци, Микаэла Бишмишяна и Арутюна Безджяна армянам удалось убедить султана Махмуда II издать в 1829 году прокламацию/указ, в котором подтверждалось право армян на богослужение в Храме Святого Воскресения. Это событие доставило великую радость армянам всего мира. Братство Свв. Иаковов и Армянский Патриархат Иерусалима взяли на себя эту пожизненную миссию и по сей день отстаивают данное важнейшее право ежедневными богослужениями в Храме Святого Воскресения.

SUMMARY

After countless struggles and sufferings, thanks to the efforts of Archimandrite Zachariah Kobetsi, Archbishop Poghos of Adrianople, Michael Bishmishian and Harutyun Bezdjian, the Armenians convinced Sultan Mahmud II to issue a decree in 1829 affirming the right of the Armenians to hold services in the Church of the Holy Sepulchre, which brought great joy to all the Armenians around the world. The Brotherhood of Sts. James and the Armenian Patriarchate of Jerusalem, through their daily services in the Church of the Holy Sepulchre, have upheld this most important right to this day as a lifelong mission.